

մէական Եկեղեցին լիազօր ներկայացուցին է Յիսուսի Քրիստոսի, երկրիս վրայ, որ Հռոմ Մայրաքաղաքն է բոլոր բնակութեանց քրիստոնեաներու, որոնց վրայ ան բացարձակ իշխանութիւն մ'ունի իբրեւ ուսուցանող հաւատացեալներու, որ Հռոմի Եպիսկոպոսը գլուխն է բովանդակ այս մեծ մարմնին: Ես կը հաւատամ որ ան յաջորդն է Յիսուսի Քրիստոսի առաջին Փոխանորդին, Ս. Պետրոս Առաքեալին, եւ որ իր Աթոռն արժանի է առաջին տեղը գրաւելու միւս բոլորին վրայ, լուսաւորուած ըլլալով քարոզութիւններով եւ նուիրագործուած արեամբը Ս. Պետրոսի եւ Ս. Պօղոսի, Փրկչին երկու մեծազոյն առաքեալներուն:

Հուսկ ուրեմն կը հաւատամ՝ թէ ինչ որ ան կը կապէ եւ կ'արձակէ երկրիս վրայ. նոյնժամայն կապուած եւ արձակուած է երկրնքի մէջ, թէ անոնք՝ զորս Հռոմէական Եկեղեցին կը ճանչնայ այս աշխարհիս վրայ իբրեւ իր զաւակները, նաեւ ճանչցուած են իբրեւ այդ՝ երկնքի մէջ, եւ թէ անոնք՝ զորս ինք կը մերժէ եւ կը լքէ, արժանի են մերժուելու եւ լքուելու երկնքէն եւ երկրէն:

Եւ այսպէս, կ'ուզեմ հետեւիլ օրինակին անոնց, որոնք կ'երդնուն հաւատարիմ եւ հնազանդ ըլլալ Հռոմէական Եկեղեցւոյ, այն Եկեղեցւոյն՝ որ ճշմարտապէս մեծ է, Սուրբ, Առաքելական եւ Ընդհանրական: Ես զանոնք կը ճանչնամ, կը պատուեմ, կը սիրեմ այս կեանքիս մէջ իբրեւ իմ եղբայր-